ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԴԱՍՎԱՐ

Թեմա՝ Գործնական աշխատանքները մայրենիից

Կազմեց՝ Հասմիկ Մելքոմյան Արամի

(անուն,ազգանուն,հայրանուն)

<<Ա.Մարգարյանի անվան N 7 հիմնական դպրոց >>ՊՈԱԿ

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Լուսինե Բալայան

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

ԿԱՊԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------2

Գլուխ 1. Գործնական աշխատանքները մայրենիից----------3

1. 1 Գործնական աշխատանքի տեսակները ----------5

1. 2 Գործնական աշխատանքների հիմնական նպատակները----------6

ԳԼՈՒԽ 2 Գործնական աշխատանքների նմուշօրինակներ----------7

Դասի պլան։Շողշողացող հավերժություն՝Մարտիրոս Սարյան----------13

Եզրակացություն----------18

Գրականության ցանկ----------19

Հավելված----------20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը

Նոր գիտելիքները ձեռք են բերվում կա՛մ պատրաստի վիճակում, կա՛մ ինքնուրույն՝ որոնողական-հետազոտական ճանապարհով: Գերմանացի մանկավարժ Դիստերվերգը ասել է. «Մարդուն անընդհատ սովորեցնելով յուրացնել պատրաստի գիտելիքներ հնարավոր է բթացնել նրա ստեղծագործական ընդունակությունները, մոռացնել տալ ինքնուրույն մտածելը»:

Հին իմաստությունն ասում է՝ կարելի է ձիուն բերել ջրի մոտ, բայց չի կարելի նրան ստիպել խմել այդ ջրից: Իսկ Ինչպե՞ս դպրոցականների մեջ «գիտելիքների աղբյուրից» ջուր խմելու ցանկություն առաջացնել: Նոր գիտելիքը, չիմացածը սովորելու, որոնելու, հետազոտելու համար անհրաժեշտ է աշակերտի համար ուսուցումն ուսումնառության ամբողջ ընթացքում գրավիչ դարձնել և նրա մոտ ձևավորել դրական, կայուն վերաբերմունք ուսման նկատմամբ: Հմուտ ուսուցչի հաջողության գրավականը աշակերտին սովորել սովորեցնելն է: Ուսման նկատմամբ սեր ունեցող աշակերտը՝ ստանալով ուսուցչի, ծնողի, հարազատի, ընկերոջ օգնությունը, ստանձնում է փոքրիկ հետազոտողի դերը և կատարում բացահայտումներ, համատեղում գիտելիքն ու կարողությունը, տեսությունն ու պրակտիկան: Աշակերտը մեծագույն հաճույք է ստանում, երբ սեփական ուժերով, ինքնուրույն աշխատանքի շնորհիվ բացահայտում է իրեն հետաքրքրող տեղեկությունը կամ ստեղծում է որևէ անհրաժեշտ, պետքական իր /օրինակ դիդակտիկ պարագա կամ աշխատանքային գործիք/:

Աշակերտների արդեն իսկ ունեցած գիտելիքները խորացնելու, ամրակայելու, ճանաչողական հետաքրքրությունները խթանելու համար անհրաժեշտ է մղել նրանց ինքնուրույն որոնողական, ստեղծագործական, նախագծային, հետազոտական գործունեության: Աշակերտների ինքնուրույն որոնողական, ստեղծագործական, նախագծային, հետազոտական գործունեությունը կազմակերպելիս, անպայման պետք է հաշվի առնել նրանց տարիքային առանձնահատկություններն ու հետաքրքրությունները:

Ստեղծագործական աշխատանքի ձևերից են նաև աշակերտների գործնական աշխատանքները:

Գործնական անվանենք սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները, որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին:

Հետազոտության նպատակը

Պարտադիր վերապատրաստման դասընթացի ավարտական հետազոտական այս աշխատանքի նպատակն է ուսումնական գործընթացում գործնական աշխատանքն անպայմանորեն կիրառելու պահանջը կարևորել և ներկայացնել գործնական աշխատանքների կոնկրետ նմուշօրինակներ:

<<Աշակերտը հատկապես յուրացնում է

միայն այն ժամանակ, երբ նա

մտածում է: Խորհենք այն մասին,

թե ինչպես մտածողության, վերլուծության,

զննման առարկա դարձնել այն,

ինչ ուսումնասիրվում է տվյալ պահին

կամ շուտով կուսումնասիրվի>>:

Վ. Սուխոմլինսկի

ԳԼՈՒԽ 1 ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԱՅՐԵՆԻՑ

Մայրենի լեզուն, որպես դասավանդման առարկա ներառում է երկու կողմ՝ նախ բուն լեզվի իմացություն, այսինքն այդ լեզվով հաղորդակցվելու, տարբեր բնույթի գրավոր ու բանավոր շարադրանք ստեղծելու կարողություն և երկրորդ՝ լեզվի քերականական կառուցվածքի իմացություն, որը փաստորեն լեզվաբանական գիտելիք է: Հանրակրթական դպրոցում մայրենի լեզվի դասավանդումը զուգակցում է այս երկու կողմերը, ընդ որում, հատկապես տարրական դասարաններում առաջնությունը տրվում է առաջին /արտահայտական և հաղորդակցական/ կողմին, երկրորդի /լեզվի կառուցվածքի/ վերաբերյալ, սահմանափակվելով միայն ամենաանհրաժեշտ տեղեկություններով: Բացի վերոգրյալից մայրենի լեզվի դասավանդումը պետք է հնարավորություն տա ուսուցչին բավարարելու սովորողի բնության, մարդու, հասարակական կյանքի մասին ունեցած հետաքրքրությունները,կազմակերպելու աշակերտների ուսումնահետազոտական գործունեությունը, սովորեցնելու նրանց մտածել, առանձնացնելու գլխավորը երկրորդականից:

Այսօր տարրական դպրոցն աստիճանաբար հաղթահարում է նեղ առարկայական ուղղվածությունը և ողջ աշխատանքը կազմակերպվում է սովորողի անձի ընդհանուր և ներդաշնակ զարգացումն ապահովելու համար: Մայրենի լեզվի ուսուցումը ևս գրեթե **վերառարկայական բնույթ և ուղղվածություն ունի**. այսինքն՝ հիմնական շեշտը դրվում է ոչ թե հայոց լեզվի հնչյունաբանության, քերականական կազմի որոշակի, հաջորդական և համակարգված ուսուցման, այլ դրանց ընդհանուր, կարելի է ասել միաժամանակյա ուսումնասիրության վրա: Տարրական դպրոցում մայրենին դառնում է կրթական գործի և ուսումնառության մի օղակը, որի նպատակադրումները ևս անձի բազմաբնույթ մտածողության, նրա հոգևոր ոլորտի ներդաշնակ զարգացմանն են ուղղված: Մայրենի լեզվի դասաժամերին ևս լուծվում են տարրական դպրոցի համար խիստ ընդհանրական խնդիրներ, որոնցից են **ուշադրության և հիշողության, մտածողության և կապակցված խոսքի միաժամանակյա, անընդհատ և ներդաշնակ զարգացումը:**

Կանոնավոր ձևավորված և զարգացած խոսքը նախ՝ երեխային ճիշտ հասկանալու և ըստ այդմ նրա հետ աշխատելու հնարավորություն է ընձեռում, ապա՝ երեխային օգնում է ճիշտ հասկանալու ուսուցման գործընթացում իրեն տրված հրահանգները և համապատասխան գործողություններ կատարելու, այսինքն՝ ապահովում է կրտսեր դպրոցականի ուսումնառության ողջ գործընթացը, երրորդ՝ ամուր հիմք է դառնում միջին դպրոցում աշակերտի հետագա ուսումնառությունը կազմակերպելու համար:

Նոր դարը, նոր հազարամյակը մարդկության առջև նոր խնդիրներ են դնում, որոնք հնարավոր կլինի լուծել աճող սերնդին որակապես նոր կրթություն տալու դեպքում: Խոսքը ոչ միայն կրթության ոլորտում քանակական փոփոխությունների, այսինքն՝ սովորողներին տրվող գիտելիքների ծավալը մեծացնելու, այլ նախ և առաջ որակական փոփոխությունների մասին է:Գիտելիքներից բացի սովորողներին անհրաժեշտ է տալ նաև դրանք կիրառելու իրական կարողություններ ու հմտություններ՝ ընդգրկելով նրան ճանաչողական գործունեության մեջ, ստեղծագործական միտք ձևավորել, ուղղորդել նրա ներքին ուժերն ու հնարավորությունները, աշխատանքի նկատմամբ սեր, հարգանք և ձգտում սերմանել:

Այսպիսով, ուսուցման արդյունավետությունը չափվում է ոչ միայն և ոչ այնքան աշակերտի յուրացրած գիտելիքներով, որքան նրա ձեռք բերած կարողություններով՝ շեշտը դնելով արդյունքի վրա, այսինքն՝ ի՞նչ կարող է նա անել: Այս խնդիրը լուծելի է դառնում, երբ ուսուցման ընթացքում վերաբաշխվում են հիմնական արժեքները.

- Ուսումնառության ընթացքում աշակերտը պասիվ ընկալողից վերածվում ակտիվ և գործուն մասնակցի,
- Ուսուցիչը հրաժարվում է սովորեցնողի, վերահսկողի, խրատողի իր դերից և դառնում է այդ գործընթացը կազմակերպող, խորհրդատու, և որպես գործընկեր՝ աշակերտի հետ մասնակցում է որոնողական աշխատանքներին:

Այսօր անհրաժեշտություն է առաջանում, որոնելու կրթական գործընթացի կազմակերպման համապատասխան միջոցներ և ձևեր, որոնց օգնությամբ կարելի կլինի իրագործել աշակերտների ինքնուրույն ստեղծագործական աշխատանքները: Այս նպատակին է ուղղված տարրական դասարաններում գործնական աշխատանքերի կազմակերպումը, որոնք աշակերտներին հնարավորություն են տալիս իրենց տեսական գիտելիքները գործնականում կիրառել, զարգացնում նրանց կիրառական կարողություններն ու հմտությունները:

Գործնական աշխատանքների ընթացքում, պետք է իրականացվեն այնպիսի գործողություններ, ինչպիսիք են գիտելիքների որոնումը, դրանց իմաստավորումը և զարգացումը, գիտելիքների ընդհանրացումը և համակարգումը: Ինչպես տեսնում ենք, գործնական աշխատանքների սահմանները շատ ընդարձակ են և իրենց մեջ ներառում են նաև աշակերտների կողմից կատարվող հետազոտական աշխատանքներն ու նախագծային գործունեությունը:

Նոր կրթակարգով կարևորվում է գործնական աշխատանքն ուսումնական գործընթացում անպայմանորեն կիրառելու պահանջը: Այս աշխատանքի ժամանակ է, որ աշակերտը կարողանում է գործնականում կիրառել իր տեսական գիտելիքները՝ դարձնելով դրանք ավելի հիմնավոր և օգտակար, ակնառու տեսնում է ուսումնասիրվող առարկաների և իրական կյանքի կապը: Այս կապը

հետաքրքրություն է առաջացնում աշակերտի մեջ ուսման նկատմամբ: Գործնական աշխատանքները նպաստում են սովորողների կիրառական կարողությունների զարգացմանը՝դրանք հետագայում վերածելով անհրաժեշտ սոցիալական հմտությունների: Հմտություններ, որոնք օգնում են աշակերտին ինքնահաստատվելու և իրեն հասարակության լիարժեք անդամ զգալու: Դպրոցը պիտի հասնի նրան, որ աշակերտն առօրյա կյանքում կարողանա իրեն լիարժեք դրսևորել և գնահատել ստացած գիտելիքների իրական արժեքը:

Աշակերտները գործնական աշխատանքների ժամանակ հնարավորություն են ունենում սեփական ձեռքերով ստեղծել դիդակտիկ նյութեր: Նրանք հաճույքով ու սիրով են օգտագործում այն, ինչն իրենք են պատրաստել: Աշակերտները շոշափելի ձևով զգում և տեսնում են իրենց աշխատանքի արդյունքը, բերկրանք են ապրում դրանից: Այստեղ է, որ ձևավորվում է աշակերտի արժեքային համակարգը, սեր առաջանում դեպի աշխատանքը:

Գործնական աշխատանքի առաջադրանքները կարող են լինել ինչպես դասագրքից՝ ծրագրային նյութի սահմաններում, այնպես էլ դպրոցից դուրս՝ տրվող տնային հանձնարարականների բնույթ (հեռուստաթերթերից տեղեկատվություն քաղել օրվա եղանակի մասին, տվյալներ հավաքել Արցախյան պատերազմի տարիներին կռված/թիկունքում կամ ռազմի դաշտում/ իրենց հարազատների կամ ծանոթ մարդկանց մասին այլն):

1. 1 ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Գործնական աշխատանքները լինում են **անհատական** և **խմբային**:Դրանք կարող են գնահատվել ինչպես միավորային,այնպես էլ ոչ միավորային ձևերով:

Գործնական աշխատանքի տարատեսակներից են պաստառի ձևավորումը,ֆիլմի/տեսահոլովակի/ նկարահանումը,դիտումն ու քննարկումը,երգի միջոցով ուսումնառությունը,դերախաղը,փորձը,բանավեճը,սահիկաշարի պատրաստումը, նաև արտադասարանական աշխատանքները(ցերեկույթ,պատի թերթիստեղծում,անկյուն-ցուցահանդես,մրցույթներ,վիկտորինաներ,էքսկուրսիաներ) և այլն:https://www.youtube.com/watch?v=Czx7whF2rTI

Սրանք կրտսեր դպրոցականների հետաքրքրությունը շարժող, նրանց լրացուցիչ տեղեկություններ տվող արդյունավետ միջոց են: Արտադասարանական բառը երբեք էլ չի ենթադրում աշխատանք՝ դասի գործընթացից դուրս, այլ՝ ուսումնական գործունեության ձև, որը դասի ժամանակ կատարվող աշխատանքի բնականոն շարունակությունն է: Գործնական աշխատանքի այս տեսակի կազմակերպումը աշակերտից պահանջում է հավաքել անհրաժեշտ նյութեր, հետաքրքրական տեղեկույթ՝ օգտվելով օժանդակ գրականությունից, համացանցից և այլ աղբյուրներից: Պետք է նշել, որ այս աշխատանքներն արդյունավետ կլինեն այն պարագայում, երբ կնպաստեն տվյալ առարկայից նրանց ունեցած գիտելիքների ավելացմանը, ճշգրտմանն ու խորացմանը:

1. 2 ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- Ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ,
- Նպաստել անհատի ինքնադրսևորմանը, ինքնաարտահայտմանը,
- Զարգացնել ստեղծագործական կարողություններ,
- Ձևավորել հետազոտական աշխատանքների նկատմամբ պահանջմունք,
- Զարգացնել հաղորդակցական կարողությունները,
- Գրական, լեզվական, գեղագիտական ճաշակի ձևավորում,
- Ամրակայել արդեն իսկ ունեցած գիտելիքները, նպաստել նոր գիտելիքների ձեռք բերմանը

Ուսուցիչը ելնելով իր դասարանի առանձնահատկություններից,նախասիրություններից պետք է հաճախակի կազմակերպի գործնական,հետազոտական աշխատանքներ:Նմանատիպ աշխատանքները էլ ավելի հետաքրքրական են դարձնում ուսումնական գործընթացը,օգնում երեխաների արագ սոցիալականացմանը:

Գլուխ 2

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿՆԵՐ

Նմուշ 1

Այս գործնական աշխատանքը կարելի է կազմակերպել երեք տարբերակով, որպեսզի աշակերտների աշխատանքները վերլուծելիս տեքստի երեք տեսակներն էլ քննարկման ենթարկվեն: Դա հնարավորություն կընձեռի ևս մեկ անգամ կրկնելու, համակարգելու, ամրակայելու աշակերտների գիտելիքները տեքստի մասին:

Տարբերակ 1

1. Լրացրո՛ւ բաց թողած տառերը և որոշի՛ր տեքստի տեսակը:
   Աշուն էր, տեր _ աթափով, ար _ ի նվազ ջերմությամբ. Դառնաշունչ քամիով, որ ծառերի ճղները պոկում էր, դեղնած տեր _ ները խմբերով քշում, տանում հեռու ձորերը: Ջինջ օ _ ի սառնության մեջ զգացվում էր առա _ ին ձյունի շունչը:

   - պատմողական
   - նկարագրական
   - դատողական

2. Վերնագրի՛ր տեքստը:
   _____

3. Մտածի՛ր նոր ավարտ տեքստի համար:
   _____
   _____
   _____:

Տարբերակ 2

1. Լրացրո՛ւ բաց թողած տառերը և որոշի՛ր տեքստի տեսակը:

Ամայի ճանապար _ ով իրար հետ _ից քայլում էին երեք ճամփոր _: Առ _ ևից գնացողը որոշեց մտնել մի լքված տնակ և այնտեղ սպասել մինչև եղանակը հանդարտվի: Երկրորդ և եր _ որդ ճանապարհորդներն էլ հետևեցին նրան:

- պատմողական
- նկարագրական
- դատողական

2. Վերնագրի՛ր տեքստը:

_____

3. Մտածի՛ր նոր ավարտ տեքստի համար:

_____
_____
_____:

Տարբերակ 3

1. Լրացրո՛ւ բաց թողած տառերը և որոշի՛ր տեքստի տեսակը:
Աշոտը որոշեց չգնալ դպրոց, որովհետև դասը չէր սովորել: Իմ կարծիքով նա ճիշտ չվարվեց , անազնիվ վարվեց: Նա կարող էր ուսուցչուհուց ներողություն խնդրել և օրվա դասերին ներկա լինել:
   - պատմողական
   - նկարագրական
   - դատողական

2. Վերնագրի՛ր տեքստը:

_____

3. Մտածի՛ր նոր ավարտ տեքստի համար:

_____
_____
_____:

Նմուշ 2.

1. Վերադասավորի՛ր նախադասություններն այնպես, որ ստացվի տեքստ:

Հրաշագործ դարբինը
Արամը հպարտությամբ էր նայում դարբին պապի հզոր մկաններին: Արամի դարբին պապը զարմանալի ու հիանալի իրեր է պատրաստում շիկացած երկաթից: Երեխաները զարմանքով նայում էին, թե շիկացած երկաթն ինչպես է թշշալով մտնում ջրի մեջ ու դառնում մի գեղեցիկ իր:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____:

2. Շարունակի՛ր տեքստը՝ ավելացնելով 2-3 նախադասություն:

_____
_____
_____
_____
_____:

3. Մտածի՛ր նոր վերնագիր տեքստի համար:
_____:

Նմուշ 3.

1. Տրված հենակետային /բանալի/ բառերով հորինի՛ր փոքրիկ պատմություն:

   օրորվել, նախշուն, առատ, բերք, ցրտել, տաք, բերքահավաք, հարավ, շունչ, տերևաթափ, ձմեռ, խայտաբղետ, քամի, ոսկեզօծ:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____:

2. Քանի՞ նախադասությունից է կազմված քո շարադրանքը: Ընդծի՛ր սկիզբն ու ավարտը:
_____:

3. Տեղադրի՛ր տրված բառերը:
   իմաստ, նախադասություն, թեմա

Տեքստը ընդհանուր _____ , հիմնական _____ և կառուցվածքով միավորված _____ խումբն է:

Նմուշ 4.

1. Ներկելով շրջանակը նշիր՝ նախադասությունների ո՞ր խումբն է տեքստ:
   - Գարունը մտածեց, որ բզեզիկին նվիրի մի լապտերիկ, որով նա կլուսավորի շրջապատը և գիշերվա խավարում կերջանկացնի բոլորին: Այդ օրվանից բզեզիկին անտառում կնքեցին նոր անունով՝ լուսատտիկ: Մինչև հիմա էլ բոլորը սքանչանում են լուսատտիկի տարածած մեղմ լույսով:
   - Ձորի մեջ արդեն ծաղկել է նշենին: Ավտոբուսի մեջ նստած էին աշակերտներ: Մարզադաշտում իրենց ուժերն են չափում թիմերը: Դպրոցականներն ուրախ ճիչերով դուրս եկան դպրոցից:

2. Խմբագրի՛ր տեքստը:
   Քնարիկի քույրիկի անունը Քնքուշ է: Քնարիկի քույրիկ Քնքուշը մանկապարտեզ է գնում: Նա շատ խելացի բալիկ է: Մանկապարտեզը կրկեսի մոտ է գտնվում: Քնարիկն ու նրա քույրիկ Քնքուշը խելացի բալիկներ են:

   _____
   _____
   _____
   _____
   _____
   _____:

3. Կարդա՛ նախադասությունները և որոշի՛ր, թե ինչպիսի խոսքեր են դրանք՝ մտերմի՞կ, թե՞ պաշտոնական:
   Ընդգծի՛ր պատասխանի ճիշտ տարբերակը:
   Ներեցե՛ք, որ անհանգստացնում եմ, կարո՞ղ եք այս տետրը փոխանցել Ձեր աղջկան:
   պաշտոնական մտերմիկ

   Ողջո՛ւյն,ընկերուհի՛ս,ի՞նչ ես անում, շտապ մեր տուն արի, մի քիչ զվարճանանք:
   պաշտոնական մտերմիկ

Նմուշ 5.

1. «Գրում ենք հրավիրատոմս»

   Սիրելի՛ _____ :
   Սիրով հրավիրում եմ մասնակցելու «Մաշտոցյան գրով անմահացած մայրենի լեզու» խորագրով միջացառմանը, որը տեղի կունենա փետրվարի 21-

ին՝ _____ 13:00 –ին, Կապանի N ___ _____ _____
հանդիսությունների սրահում:
Սիրով և անհամբերությամբ կսպասեմ:
Քո _____:

2. Նկարագրդի՛ր հրավիրատոմսը:

3. «Հրավիրատոմս»-ը դարձրու՛ «Հայտարարություն»:
_____
_____
_____
_____
_____:
https://www.youtube.com/watch?v=JVzpvjv782o

Նմուշ 6.

Հավաքի՛ր տեղեկություններ Մարտիրոս Սարյանի մասին՝ պաստառի ձևավորման համար(Շրջված դասարան մեթոդի կիրառում):

1. Հավաքի՛ր կենսագրական տվյալներ:
   - մանկություն
   - նկարչական առաջին փորձեր
   - մոսկովյան տարիներ

2. Գրի՛ր և անգիր սովորի՛ր Լեոնիդ Վիշեսլավսկու «Սարյանական գույները» բանաստեղծությունը:

3. Ինչո՞ւ է Ավետիք Իսահակյանը համարում, որ Սարյանն ամբողջ աշխարհինն է:

4. Ո՞վ է Մարտիրոս Սարյանի արձանի հեղինակը:

5. Ինչո՞ւ է Սարյանի քանդակը ոտաբոբիկ: Ինչպե՞ս է այն մեկնաբանում արձանի հեղինակը:

6. Որոնի՛ր և գտի՛ր թնավոր խոսքեր Մարտիրոս Սարյանի մասին:

7. Ըստ քեզ՝ ո՞ր գույնն է գերիշխում Մարտիրոս Սարյանի նկարներում և ինչո՞ւ:

8. Պատկերացրու՛, որ ձեռքիդ է Սարյանի ներկապնակը:Սարյանի մասին պատմող, որ դրվագները կնկարեիր: Փորձի՛ր նկարել:

Վերոնշյալ հարցերին պատասխանելու համար կարող ես օգտվել համացանցից, հանրագիտարանից, 4-րդ դասարանի «Ինքնուրույն ընթերցանության» գրքից:https://www.youtube.com/watch?v=A9ic8WNPnF8&t=4s

Նմուշ7.

Գործնական աշխատանք մայրենի 2-րդ դասարան I կիսամյակ

Անուն, ազգանուն՝ _____Ամսաթիվ՝ _____

—1.Գունավոր մատիտներով ներկելով համապատասխանեցրու՛ ասացվածքների սկիզբն ու վերջը :/3մ. /



2.Գրի՛ր այդ ասացվածքները:
/3մ/

ա) _____

բ) _____

գ) _____

3.ա)Օգնի՛ր լուսնին ամպիկի մեջ գրված բառը միացնել աստղիկների մեջ գրված բառերին և ածանցներին և աղյուսակում լրացրու՛ ստացված բառերը:
/6մ/



Բարդ բառեր	Ածանցավոր բառեր

բ)Ո՞ր աստղիկը չկարողացավ բառ կազմել ամպիկի հետ: Ներկի՛ր այն կարմիր գույնով և նրա վրա գրված ածանցով կազմի՛ր 3 բառ:
/3մ/

_____
_____
_____

4.Ներկի՛ր այն ամպիկները, որոնց մեջ գրված բառերը ցույց են տալիս առարկա: Այդ բառերով լրացրու՛ աղյուսակը:
/6մ/



Անձ ցույց տվող առարկաներ	Իր ցույց տվող առարկաներ

5.Մայր կենդանիներն իրենց ձագուկների հետ գնացին անտառ: Հանկարծ հայտնվեց առյուծն իր ձագի հետ: Օգնի՛ր ձագերին գտնել մայրիկներին, միացրու՛ տարբեր գույնի մատիտներով : Յուրաքանչյուր նկարի տակ գրի՛ր կենդանու և ձագի անունը:

/5մ/





_____ _____ _____ _____ _____

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Ուսուցիչ Հ. Մելքումյան Ամսաթիվ 11. 10. 2022թ.
Աշակերտների քանակը՝ 30 , ներկա՝28, բացակա՝2

Առարկան – մայրենի՝ ինքնուրույն ընթերցանություն		
Դասարանը –IV	Ուստարի -2022թ	Կիսամյակը - I
Թեման	Շողշողացող հավերժություն՝Մարտիրոս Սարյան	
Դասի տիպը	Դաս-հետազոտություն	
Մեթոդներ	Շրջված դասարան,հնգյակ	
Դասի նպատակը	• Մասնակցել վերնագրի վերծանման աշխատանքին՝արտահայտելով իրենց կարծիքը։ • Վերնագրի միջոցով համադրել Մարտիրոս Սարյանի և Հայաստանի մասին ունեցած գիտելիքները՝խոսքը հիմնավորելով օրինակներով։ • Զարգացնել բանավոր և գրավոր կապակցված խոսքը, տեքստի շուրջ աշխատանք կատարելու կարողությունը։ • Ամրակայել ստեղծագործական կարողությունները։	

	• Զարգացնել հաղորդակցական և համագործակցային կարողություններ խմբային աշխատանքի միջոցով: • Զևավորել վերլուծական կարողություններ՝դատողություններ,համեմատություն • ներ, մեկնաբանություններ, եզրակացություններ անելու միջոցով: • Ամրապնդել ստեղծագործական-հետազոտական աշխատանքի արդյունքում հավաքած տեղեկությունները և ձևավորել պատի թերթը:
Վերջնարդյունք Ները	• Բավարարի իր հետաքրքրությունները ինքնուրույն աշխատանքի՝ընթերցելու,դիտելու,ունկնդրելու,ուսումնասիրելու միջոցով: • Լսի,կարդա և հասկանա տարբեր բարդության և բովանդակության ոչ գրական տեքստեր,ըստ նպատակի դուրս բերի անհրաժեշտ տեղեկությունները: • Գիտակցի պատասխանատվություն իր,իր ընտանիքի,շրջապատող մարդկանց,հայրենիքի հանդեպ: • Խոսելիս ճիշտ արտասանի բառերը, պահպանի հայերենի ուղղախոսական կանոնները: • Կարևորի լեզվի դերը միտքը հասկանալի տեղ հասցնելու գործում: • Իմանա բառերի ձևաիմաստային տեսակները, խոսքում կիրառի հոմանիշ և հականիշ բառեր, օգտվի դպրոցական բառարաններից,համակարգչից:
Ընդհանրական խաչվող հասկացություններ ը	Անհատական և մշակութային արժեհամակարգ Ժամանակ և տարածություն Անհատներ և հարաբերություններ
Միջառարկայա կան կապերը	Կերպարվեստ,տեխնոլոգիա,մաթեմատիկա
Անհրաժեշտ նյութեր,	• Դասագիրք՝ Ինքնուրույն ընթերցանություն 4-րդ դասարան

տեխնիկական միջոցներ	• Աշխատանքային տետր • Նկարչական պարագաներ • Համակարգիչ • Տեսագրիչ • Պաստառներ
Գնահատում	Կարելի է իրականացնել ՁԳ բնութագրիչներով:
Տնային աշխատանք	Կարդալ էջ 64-72:Սովորել պատմել <<Սարյանն ամբողջ աշխարհինն է>> նյութը:

Դասի ընթացքը

Դասի փուլերը	**Փուլի խնդիրները**	**Ուսուցչի գործողությունները**	**Աշակերտի գործողությունները**
Կազմակերպչական մաս /1-2 րոպե/	Նախապատրաստվել դասին	Ուսուցչի ուղերձ /դասի նշանաբանը/	Աշակերտները պատրաստվում են դասին, պլանավորում քայլերը:
Խթանման փուլ	Շարժել հետաքրքրությունը և մտածողությունը տվյալ թեմայի շուրջ:	Էկրանին երևում է **դասի** վերնագիրը, աշակերտների մասնակցությամբ մեկնաբանվում է այն:	• Ասում են Մարտիրոս Սարյանի հետ կապված բառեր՝ո՞վ է և ինչպիսի՞նն է. . .
Իմաստի ընկալման փուլ	Իրականացնել ստեղծագործական-հետազոտական աշխատանքների ներկայացում,պարզաբանում,համակարգում:	• Պատասխանել մեկնարկային հարցերին: 1. Ներկայացրե՛ք ձեր հավաքած կենսագրական տվյալները Մ. Սարյանի մասին՝ • մանկություն	• Պատասխանում են հարցերին: • Կատարում են առաջադրանքը՝ուշադիր դիտելով սահիկաշաը

		• նկարչական առաջին փորձեր • մոսկովյան տարիներ **2.** Անգիր սովորի՛ր Լեոնիդ Վիշեսլավսկու «Սարյանական գույները» բանաստեղծությունը: 3. Ինչո՞ւ է Ավետիք Իսահակյանը համարում, որ Սարյանն ամբողջ աշխարհինն է: 4. Ո՞վ է Մարտիրոս Սարյանի արձանի հեղինակը: 5. Ինչո՞ւ է Սարյանի քանդակը ոտաբոբիկ: Ինչպե՞ս է այն մեկնաբանում արձանի հեղինակը: 6. Որոնի՛ր և գտի՛ր թևավոր խոսքեր Մարտիրոս Սարյանի մասին: 7. Ըստ քեզ՝ ո՞ր գույնն է գերիշխում Մարտիրոս	:

		Սարյանի նկարներում և ինչո՞ւ: 8. Պատկերացրու՛, որ ձեռքիդ է Սարյանի ներկապնակը: Սարյանի մասին պատմող, որ դրվագները կնկարեիր: Փորձի՛ր նկարել: 9. Սահիկաշարի ցուցադրում՝ մեկնաբանություններով,հարցեր տալով:	
Կշռադատ- ման փուլ	Ամրապնդել, հնարավորություն տալ սովորողներին ներկայացնել սովորածն ու յուրացրածը:	• **Խմբային աշխատանք** /դասարանը նախապես բաժանել խմբերի / Յուրաքանչյուր խմբի հանձնարարում է ձևավորել պաստառ՝ նվիրված Մարտիրոս Սարյանին և հակիրճ մեկնաբանել պաստառի համար նախապես մտածված	• Յուրաքանչյուր խումբ նկարազարդում և պատկերազարդում է պաստառը ըստ իրենց հավաքագրած նյութերի: • Խմբով քննարկում են և որոշում,թե ով է կամ ովքեր են ներկայացնելու պաստառի

		վերնագիրն ու պաստառի բովանդակությունը:	վերնագիրն ու բովանդակությունը:
Անդրադարձ	Անդրադարձ կատարել դասի բոլոր փուլերով:	• Կիրառում է **<<Հնգյակ>>** մեթոդը:	• Աշակերտները, միմյանց լրացնելով,հորի նում են հնգյակ Մարտիրոս Սարյանի մասին:
Գնահատում		Գնահատումն իրականացվում է ձևավորող գնահատման բաղադրիչներով՝ **ուսուցչի կողմից արդյունավետ հետադարձ կապի ապահովում** : Գնահատվում է նաև խմբային աշխատանքը:	Սովորողների կողմից իրենց գիտելիքներն ինքնուրույն գնահատելու ունակության ձևավորում **/ինքնագնահատում, փոխադարձ գնահատում/**:

Եզրակացություն

Նոր դարը, նոր հազարամյակը մարդկության առջև նոր խնդիրներ են դնում, որոնք հնարավոր կլինի լուծել աճող սերնդին որակապես նոր կրթություն տալու դեպքում: Խոսքը ոչ միայն կրթության ոլորտում քանակական փոփոխությունների, այսինքն՝ սովորողներին տրվող գիտելիքների ծավալը մեծացնելու, այլ նախ և առաջ որակական փոփոխությունների մասին է:Գիտելիքներից բացի սովորողներին անհրաժեշտ է տալ նաև դրանք կիրառելու իրական կարողություններ ու հմտություններ՝ ընդգրկելով նրան ճանաչողական գործունեության մեջ,

ստեղծագործական միտք ձևավորել, ուղղորդել նրա ներքին ուժերն ու հնարավորությունները, աշխատանքի նկատմամբ սեր, հարգանք և ձգտում սերմանել:

Այսօր անհրաժեշտություն է առաջանում, որոնելու կրթական գործընթացի կազմակերպման համապատասխան միջոցներ և ձևեր, որոնց օգնությամբ կարելի կլինի իրագործել աշակերտների ինքնուրույն ստեղծագործական աշխատանքները: Այս նպատակին է ուղղված տարրական դասարաններում գործնական աշխատանքների կազմակերպումը,որոնք աշակերտներին հնարավորություն են տալիս իրենց տեսական գիտելիքները գործնականում կիրառել՝ձևավորելով կիրառական կարողություններ ու հմտություններ :

Գործնական աշխատանքների ընթացքում, պետք է իրականացվեն այնպիսի գործողություններ, ինչպիսիք են գիտելիքների որոնումը, դրանց իմաստավորումը և զարգացումը, գիտելիքների ընդհանրացումը և համակարգումը: Ինչպես տեսնում ենք, գործնական աշխատանքների սահմանները շատ ընդարձակ են, և իրենց մեջ ներառում են նաև աշակերտների կողմից կատարվող հետազոտական աշխատանքներն ու նախագծային գործունեությունը /գործնական աշխատանքներ մայրենիից, էջ 4/:

Նոր չափորոշչով կարևորվում է գործնական աշխատանքն ուսումնական գործընթացում անպայմանորեն կիրառելու պահանջը:Այս աշխատանքի ժամանակ է ,որ աշակերտը կարողանում է գործնականում կիրառել իր տեսական գիտելիքները՝դարձնելով դրանք ավելի հիմնավոր և օգտակար,ակնառու տեսնում է ուսումնասիրվող առարկաների և իրական կյանքի կապը:Այս կապը հետաքրքրություն է առաջացնում աշակերտի մեջ ուսման նկատմամբ:

Աշակերտները գործնական աշխատանքների ժամանակ հնարավորություն են ունենում սեփական ձեռքերով ստեղծել դիդակտիկ նյութեր:Նրանք հաճույքով ու սիրով են օգտագործում այն,ինչն իրենք են պատրաստել:Աշակերտները շոշափելի ձևով զգում և տեսնում են իրենց աշխատանքի արդյունքը,բերկրանք են ապրում դրանից:Այստեղ է,որ ձևավորվում է աշակերտի արժեքային համակարգը,սեր առաջանում դեպի աշխատանքը:Ուսուցիչը ելնելով իր դասարանի առանձնահատկություններից,նախասիրություններից պետք է հաճախակի կազմակերպի գործնական,հետազոտական աշխատանքներ:Նմանատիպ աշխատանքները էլ ավելի հետաքրքրական են դարձնում ուսումնական գործընթացը,օգնում երեխաների արագ սոցիալականացմանը՝ :

Օգտագործված գրականություն

1.Կարինե Թորոսյան, Կարինե Չիբուխչյան., Գործնական աշխատանքներ մայրենիից, տարրական դասարաններ, Երևան 2012:
2.«Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես, 2016, N 5:
3.Մելանյա Աստվածատրյան, Սիրամարգ Վարդումյան, Անահիտ Արնաուդյան, Իզաբելլա Օհանովա, Ռուբեն Պետրոսյան, Լենա Երեմյան, Բազմաբնույթ

մտածողության տեսության կիրառումը ուսուցման վաղ շրջանում, ձեռնարկ տարրական դպրոցի ուսուցչի համար, Երևան 2001:
4.Օ. Միքաելյան, Ս. Միքաելյան, Սովորողների ուսումնական ձեռքբերումների գնահատումը, Ձեռնարկ ուսուցչի համար, 2011:
5.Կարինե Թորոսյան, Կարինե Չիբուխչյան, Մայրենի 4, Գիտելիքների ստուգման առաջադրանքների ժողովածու, Երևան 2016:
6.Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան «Մայրենի 3», «Էդիթ Պրինտ», 2008:
7.Կարինե Թորոսյան, Վաչագան Սարգսյան և ուրիշներ, Մայրենի 4, «Մանմար» 2017:
8.Կարինե Թորոսյան, Գ. Թերզյան, Հ. Խաչատրյան, Խոսք և հաղորդակցություն 2, մեթոդական ձեռնարկ, Երևան 2016:

Հավել վածք